

ԴԱՍ 6.1. Անտարկտիկա: ընդհանուր աշխարհագրական ակնարկ

• • •

Ամենամեծ կղզին Ռոսի կղզին է՝ համանուն ծովում: Կղզու վրա էլ աշխարհամասի ամենաբարձր հրաբուխն է՝ **Էրեբուսը**՝ 3794մ բարձրությամբ: Էրեբուսն աշխարհի ամենաակտիվ հրաբուխներից մեկն է: Խառնարանում կա յուրահատուկ լավային լիճ: Մյուս գործող հրաբուխը Հարավ Շետլանդական կղզեխմբի **Գեսեյշըն** կղզու վրա գտնվող համանուն հրաբուխն է:

Անտարկտիդայի եզրամասերը գտնվում են բևեռային շրջագծին մոտ(հրվ.լ. 66.5⁰): Բացառություն է կազմում Անտարկտիկական թերակղզին, որն հասնում է մինչև հրվ.լ. 63⁰ լայնությունները:

• • •

Մայրցամաքը գրեթե ամբողջությամբ ծածկված է սառույցի հաստ շերտով, որի միջին հաստությունը կազմում 2500-2800մ(առավելագույն հաստությունը 4 կմ-ից անցնում է): Այստեղ է կենտրոնացված համաշխարհային քաղցրահամ ջրի 70%-ը: Եթե Անտարկտիդայի սառույցները ջարդեն և փռեն մայրցամաքի ու կղզիների վրա, ապա այն կկազմի 40մ հաստություն ունեցող շերտ: (Գիտնականները ապացուցում են, որ Անտարկտիդայի սառցադաշտերը ձևավորվել են 34 մլն տարի առաջ երկրագնդի վրա տեղի ունեցած հզոր սառցապատման արդյունքում:)

• • •

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ սառույցի հաստ շերտի տակ կան տեղամասեր, որոնք օվկիանոսի մակարդակից ցածր են մինչև 2555մ: Մայրցամաքի տարածքի 0,3%-ը (40 հազ քառակուսի կմ) սառույցից ազատ տարածքներ են, որոնց անվանում են՝ չոր հովիտներ: Դրանք

գտնվում են արևմտյան ափամերձ շրջաններում: Մառույցից մերկ են նաև բարձր գագաթները (**սունասաակները**): Մառցադաշտի առավելագույն հաստությունը անցնում է 4000 մետրից:

• • •

Հարավային բևեռից շուրջտարի դեպի մայրցամաքի եզրեր փչում են ուժգին քամիներ, որոնց անվանում են հոսքաքամիներ: Դրանք փչում են 40–60մ/վրկ. արագությամբ և տևում են մինչև 6 ամիս: Մայրցամաքի առափնյա կղզիները, Անտարկտիկական թերակղզու հյուսիսային կեսը գտնվում են մերձանտարկտիկական կլիմայական գոտում և այստեղ 3 ամիս լինում է կարճատև ամառ և օդի ջերմաստիճանը հասնում է 5–10°C-ի: Մթնոլորտային տեղումների տարեկան քանակը քիչ է: Մայրցամաքում այն կազմում է մինչև 150մմ, իսկ հարակից կղզիներում՝ մինչև 400մմ, գերազանցապես ձյան տեսքով: Անտարկտիդայի «**Վոստոկ**» գիտակայանում դիտվել է –89,2°C (21.07.1983թ): Առափնյա գոտում կարճատև զով շրջանում ձևավորվում են նաև սառցադաշտային սնման փոքր գետեր: Նշանավոր է **Օսիքս** գետը՝ 20կմ երկարությամբ: Մայրցամաքում հանդիպում են աղի լճեր, որոնք ցածր ջերմաստիճանի պայմաններում սառցակալում են : Այդպիսիք են **Վանդա** և **Դոն Ժուան** լճերը: Իսկ խորությամբ աչքի է ընկնում **Ռադոկ** լիճը:

• • •

Այն պայմանավորված է տեղական կլիմայով: Ձմեռային ցածր ջերմաստիճանների պատճառով ձևավորվում են բևեռային մրրիկներ, որոնք պտտվում են հարավային բևեռի շուրջ փակ հետագծով ու չեն խառնվում հարևան լայնությունների մթնոլորտի հետ: Օզոնային անցքերը պայմանավորված են նաև մերձբևեռային լայնություններում օզոնային շերտի նվազմամբ:

• • •

Հատկապես շատ են ձայերը, ջրագռավները: Անտարկտիկական սառը ջրերում հանդիպում է երկրագնդի ամենախոշոր կենդանին՝ կապույտ կետը: Շատ են կետագգիները, շնաձկները, դելֆինները:

Անտարկտիդա մայրցամաքը ոչ մի պետության չի պատկանում: Չունի մշտական բնակիչներ: Մայրցամաքում գործում է աշխարհի 20 (*բևեռից 180կմ հեռավորության վրա կա մի վայր, որտեղ գործում են Անտարկտիկայի պայմանագիրը ստորագրած երկրների դրոշները, օրինակ՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Ավստրալիայի, ՀԱՀ-ի, Ֆրանսիայի, Նոր Զելանդիայի և այլն*) երկրի 38 գի-

տակայան, որոնք ուսումնասիրում են սառցադաշտերը, ռելիեֆը, ցամաքի ընդերքը, մթնոլորտը: Տարվա ընթացքում ժամանակավոր բնակիչների թիվը տատանվում է 1000-4000-ի միջև: Ցամաքում թույլատրվում է միայն գիտական գործունեություն: Արգելվում է իրականացնել՝ ռազմական և միջուկային զենքի կիրառում: Ամենահեռավորը Ամունդսեն-Սքոթ գիտակայանն է՝ հվ. լ. 90°-ում, այսինքն հարավային բևեռում:

• • •

Անտարկտիկայի կղզիները նույնպես չունեն մշտական բնակիչներ, չնայած, որ առկա են բավարար պայմաններ բնակության համար: Բացառություն է կազմում Հարավային Ջորջիա կղզեխմբի, Գոյուտվիկեն կղզին, որտեղ կա մշտական բնակավայր՝ 23 բնակչով: Ջբաղվում են ձկնորսությամբ: Անտարկտիդայի ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել են քարածխի, ոսկու, երկաթաքարի, գունավոր մետաղների, պլատինի, թանկարժեք քարերի, գրանիտի, ցիրկոնիումի զգալի պաշարներ: Քարածխի առկայությունը վկայում է երկրաբանական վաղ անցյալում (մեզոզոյում) մերձարևադարձային տաք ու խոնավ կլիմայի և հարուստ ու փարթամ բուսականության գոյության մասին:

• • •

Թերակղզու սահմաններում դեպի ցամաք խորանում են Անտարկտիկական Ալպերը, որոնք Անդերի , Խաղաղ օվկիանոսյան Հրե օղակ գեոսինկլինալային գոտու շարունակությունն են., որտեղ կան գործող հրաբուխներ և տեղի են ունենում ուժգին երկրաշարժեր: Անտարկտիկական Ալպերը ընդհատվում են աշխարհի ամենալայն (950կմ) **Գրեյկի** նեղուցով, որով էլ Անտարկտիդան բաժանվում է **Հրո Երկիր** կղզեխմբից: Մայրցամաքի ամենաբարձր կետը **Էլսուորտի** լեռնաշղթայի եզրամասում գտնվող **Վինսոն** լեռնագագնգվածն է՝ 4892մ. բարձրությամբ:

• • •

Երկրագնդի գլոբալ տաքացման արդյունքում Անտարկտիկական թերակղզում ձևավորվում է տունդրա: Գիտնականների կանխատեսմամբ մեկ դար հետո կհայտնվեն ծառեր: Բուսատեսակներից հանդիպում են մամուռներ, քարաքոսեր, պարզագույն ջրիմուռներ, սնկեր, առափնյա կղզիներում շատ են ծաղկավոր բույսերը: Համեմատաբար հարուստ է կենդանական աշխարհը, որի սննդի աղբյուրը ծանծաղուտի **պլանկտոնն** է՝ ջրում կախված

կյանքի վարող օրգանիզմների(հատկապես՝ փափկամորթ) ամբողջությունը: Ափամերձ ջրերում հանդիպում են փոկեր, ծովափղեր: Թռչուններից՝ պինգվինների 17 տեսակ կա, որոնցից ամենախոշորը կայսերական պինգվինն է: Տարվա զով ժամանակաշրջանում ձևավորվում են թռչնաշուկաներ, որոնք ունեն հարուստ կերային բազա՝ ձկնային հարստությունները: Պինգվինները ևս գիշատիչ թռչունների կերակրացանկում են: